

Microsoft-ի Մատակարարի վարքագծի կանոնները

Microsoft-ի առաքելությունն է հնարավորություն տալ մեր մոլորակի յուրաքանչյուր անձի և յուրաքանչյուր կազմակերպության՝ հասնելու ավելիին: Մեր առաքելությունը չի սահմանափակվում միայն նորարարական տեխնոլոգիաների ստեղծմամբ: Մեր առաքելությունն է նաև բացահայտել, թե ինչպիսին ենք մենք որպես ընկերություն և որպես առանձին անհատներ, թե ինչպես ենք իրականացնում մեր բիզնեսի ներքին կառավարումը, ինչպես ենք աշխատում մեր հաճախորդների, գործընկերների, կառավարությունների, համայնքների և մատակարարների հետ:

[Գործարար վարվելակերպի նորմերի](#) միջոցով Microsoft-ը սահմանել է նորմեր, որոնք ներառում են բիզնեսի էթիկական գործելաոճը և կանոնակարգի պահանջներին համապատասխանությունը: Ինչպես նաև, Microsoft-ն ակնկալում է, որ այն ընկերությունները, որոնց հետ մենք համագործակցում ենք, կընդունեն այս ազնիվ վարքագծի կողմնակցությունը՝ հետևելով Microsoft-ի Մատակարարի վարքագծի կանոններին (ՄՎԿ) և սովորեցնելով այն իրենց աշխատակիցներին:

1. ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ ՀԵՏԱՈՒՄ

Մատակարարներն ու նրանց աշխատակիցները, աշխատակազմը, գործակալները և ենթակապալառուները (միասին՝ «Մատակարարները») պետք է հետևեն սույն Մատակարարի վարքագծի կանոններին, երբ բիզնես գործունեություն են իրականացնում Microsoft-ի հետ կամ նրա անունից: Մատակարարները պետք է պահանջեն իրենց ենթամատակարարներից, որպեսզի նրանք իմանան և կիրառեն ՄՎԿ-ն իրենց գործունեության մեջ և մատակարարման շղթայում: Մատակարարները պետք է անհապաղ հայտնեն Microsoft-ի իրենց կոնտակտային անձին, Microsoft-ի ղեկավարության անդամին կամ սույն փաստաթղթի վերջում նշված որևէ կոնտակտային անձի ցանկացած իրավիճակի զարգացման մասին, որն առաջացնում է Մատակարարի կողմից սույն Վարքագծի կանոնների խախտում:

Microsoft-ի բոլոր Մատակարարները պարտավոր են իրականացնել իրենց աշխատանքային գործունեությունը՝ ամբողջովին այն համաձայնեցնելով գործող բոլոր օրենքներին ու կանոնակարգերին ու Microsoft-ի պահանջներին, որոնք կարող են ավելի խիստ լինել, քան տեղական իրավական պահանջները: Բոլոր այն դեպքերում, երբ Microsoft-ի պահանջներն ավելի խիստ են, քան տեղական իրավական պահանջները, Մատակարարները պարտավոր են հետևել Microsoft-ի ավելի խիստ պահանջներին:

Թեև ակնկալվում է, որ Microsoft-ի Մատակարարները պետք է ինքնավերահսկում իրականացնեն և ցույց տան, որ հետևում են ՄՎԿ-ին, Microsoft-ը կարող է աուդիտ

անցկացնել կամ ստուգել Մատակարարների հաստատությունները՝ համապատասխանությունը հաստատելու համար: Մատակարարները, ովքեր անօրինական պահվածք են դրսևորում կամ խախտում են սույն ՄՎԿ-ն կամ Microsoft-ի որևէ քաղաքականություն, Microsoft-ի հետ իրենց գործարար հարաբերությունները դադարեցնելու վտանգի են ենթարկում: Անհրաժեշտ է հետևել ՄՎԿ-ին և անցնել Microsoft-ի կողմից առաջարկվող ՄՎԿ-ի դասընթացը, ինչպես նաև կատարել Մատակարարի և Microsoft-ի միջև կնքված որևէ պայմանագրի մեջ նշված մյուս բոլոր պարտավորությունները:

Microsoft-ը պարտավորվում է պահպանել մարդու իրավունքների և ազնիվ աշխատանքային գործունեության բարձր չափանիշները իր մատակարարման ամբողջ շղթայում: Microsoft-ի խնդրանքով մատակարարը կտրամադրի անհրաժեշտ տեղեկատվություն և օժանդակ փաստաթղթեր, որոնք թույլ կտան Microsoft-ին կատարել և լրացնել մատակարարման շղթայի պատշաճ ուսումնասիրությունը, ներառյալ ենթակապալառուներից որոշակի տեղեկատվության բացահայտումը, որը կարող է պահանջվել Microsoft-ի կողմից:

2. ԻՐԱՎԱԿԱՆ և ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Microsoft-ի բոլոր մատակարարները պարտավոր են իրականացնել իրենց բիզնես գործունեությունը, որը վարում են Microsoft-ի հետ և/կամ նրա անունից, ամբողջովին համաձայնեցնելով այն գործող բոլոր օրենքներին և կանոնակարգերին, ինչպես նաև պարտավոր են, առանց բացառության, հետևել հետևյալ պահանջներին.

2.1 Առևտուր. Հետևել բոլոր օրենքներին և կանոնակարգերին, որոնք կիրառելի են ապրանքների ներմուծման կամ արտահանման համար, ներառյալ, բայց չսահմանափակվելով առևտրային օրենքներով և պատժամիջոցների կանոնակարգերով: Մատակարարները չեն կարող տրամադրել վերահսկվող տեխնոլոգիաներ, պրոդուկտներ կամ տեխնիկական տվյալներ Microsoft-ին՝ առանց այդ վերահսկողության մասին ծանուցում ներկայացնելու, որն անհրաժեշտ է Microsoft-ին՝ գործող օրենքները պահպանելու համար:

2.2 Հակամենաշնորհային կարգավորում. Վարել բիզնեսը՝ ամբողջովին համապատասխանեցնելով այն հակամենաշնորհային և արդար մրցակցության օրենքներին, որոնք կարգավորում են բիզնեսի վարման իրավակարգերը:

2.3 Հակակոռուպցիոն. Վարել բիզնեսը՝ խստորեն հետևելով [ԱՄՆ-ի արտաքին կոռուպցիայի դեմ պայքարի մասին օրենքին](#) («FCPA»), ինչպես նաև հակակոռուպցիոն և փողերի լվացման դեմ պայքարի օրենքներին, որոնցով կարգավորվում են Մատակարարի կողմից բիզնեսի վարման իրավասությունները:

- a. Մատակարարները պետք է հետևեն հակակոռուպցիոն և փողերի լվացման դեմ պայքարի գործող բոլոր օրենքներին՝ ներառյալ FCPA-ն, ինչպես նաև հետևեն լոբբինգը, նվերների տրամադրումը, նվիրատվությունները, աշխատանքի ընդունումը, պետական պաշտոնյաներին վարձատրությունները, քաղաքական քարոզարշավներին աջակցությունը կարգավորող օրենքներին և այլ առնչվող կանոնակարգերին: Մատակարարները պետք է արգելեն կաշառակերության, կոռուպցիայի, շորթման և յուրացման ցանկացած ձև: Բոլոր գործարքները պետք է իրականացվեն թափանցիկ կերպով և ճշգրտորեն արտացոլվեն մատակարարի գրանցամատյաններում և արձանագրություններում: Պետք է իրականացվեն սահմանված պահանջներին համապատասխանության վերահսկողություն, հաշվառումների վարում և հարկադրանքի միջոցների կիրառում՝ հակակոռուպցիոն օրենքներին համապատասխանությունը ապահովելու համար:
- b. Ոչ մի Մատակարար, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, չպետք է խոստանա, թույլատրի, առաջարկի կամ վճարի արժեքավոր որևէ բան (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ նվերներ, ճանապարհորդություն, հյուրընկալություն, բարեգործական նվիրատվություններ կամ աշխատանք) որևէ պետական պաշտոնյայի կամ մեկ ուրիշ կողմի՝ ոչ պատշաճ կերպով ազդելու համար այդ պաշտոնյայի գործողության կամ որոշման վրա՝ Microsoft-ի գործարար շահերը որևէ կերպ առաջ տանելու կամ որևէ այլ ոչ պատշաճ եղանակով Microsoft-ի գործարար շահերը որևէ կերպ առաջ տանելու համար:
- c. «Պետական պաշտոնյա» ասելով հասկանում ենք՝ i) պետական մարմնի կամ ստորաբաժանման ցանկացած աշխատող՝ ներառյալ ընտրված պաշտոնատար անձինք, (ii) ցանկացած մասնավոր անձ, ով հանդես է գալիս պետական մարմնի անունից, թեկուզև ժամանակավորապես, (iii) պետությանը պատկանող կամ նրա կողմից վերահսկվող ընկերությունների աշխատողներ և աշխատակիցներ, (iv) քաղաքական պաշտոնի թեկնածուներ, v) քաղաքական կուսակցությունների պաշտոնատար անձինք և (vi) հասարակական, միջազգային կազմակերպությունների, ինչպիսիք են Համաշխարհային բանկը և ՄԱԿ-ը, պաշտոնատար անձինք, աշխատակիցներ և ներկայացուցիչներ:
- d. Մատակարարները պետք է հաղորդեն ցանկացած աշխատակցի, ներկայացուցչի կամ գործընկերոջ կողմից արձանագրված ոչ էթիկական վարքի և կաշառքի կամ ավետչեքի դեպքի մասին:
- e. Որպես Microsoft-ի ներկայացուցիչներ՝ Մատակարարները պետք է բոլոր առումներով հետևեն [Microsoft-ի ներկայացուցիչների հակակոռուպցիոն քաղաքականությանը](#):

2.4 Հասանելիություն. Ամբողջ աշխարհում ավելի քան մեկ միլիարդ մարդ ապրում է հաշմանդամության տարբեր խնդիրներով՝ ներառյալ տեսողության, լսողության, շարժունակության, ճանաչողական, խոսքի և հոգեկան առողջության: Տարբեր հնարավորություններ ունեցող անձանց համար հասանելի պրոդուկտների, հավելվածների և ծառայությունների ստեղծումը Microsoft-ի գաղափարախոսության մի

մասն է կազմում, ինչպես նաև մեր առաքելությունն է՝ մոլորակի յուրաքանչյուր անձի և կազմակերպության հնարավորություն տալ հասնելու ավելիին: Ցանկացած արդյունք ստեղծելիս Microsoft-ի յուրաքանչյուր մատակարար պարտավոր է հետևել՝

- a. Միջազգային հասանելիության ստանդարտների ամենավերջին տարբերակին՝ Վեբ բովանդակության հասանելիության ուղեցույցի (WCAG) A և AA մակարդակին՝ <https://www.w3.org/standards/techs/wcag#w3c> և
- b. Հասանելի սարքերի, պրոդուկտների, վեբկայքերի, վեբ հավելվածների, ամպային ծառայությունների, ծրագրերի, բջջային հավելվածների, բովանդակության և ծառայությունների ստեղծման համար Microsoft-ի կողմից տրամադրված և օրինական բոլոր պահանջներին և ստանդարտներին:

Microsoft-ը պարտավորվում է օգնել մեր մատակարարներին ստեղծել հասանելիության մշակույթ և օգնել բոլորին առավելագույն օգուտ քաղել առաքման արդյունքներից: Ուսումնասիրեք Microsoft-ի Մատակարարների հասանելիության գործիքակազմը <https://www.microsoft.com/en-us/accessibility/supplier-toolkit-resources> հասցեով:

3. ԲԻԶՆԵՍԻ ՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ և ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

Microsoft-ի բոլոր Մատակարարներն իրենց գործարար հարաբերություններն ու գործունեությունը պետք է վարեն ազնիվ և անկեղծ ու պարտավոր են առանց բացառության կատարել հետևյալ պահանջները.

3.1 Բիզնեսին առնչվող ինֆորմացիայի հաղորդում. Բիզնեսին առնչվող ամբողջ ինֆորմացիայի և դրա հաղորդման հետ կապված գործողությունները պետք է կատարվեն ազնվորեն ու ճշգրիտ և համապատասխանեն դրանց կատարումն ու ճշգրտությունը ապահովող բոլոր գործող օրենքներին:

3.2 Հաղորդակցություն. Լինել ազնիվ, անկեղծ և շիտակ քննարկումների ժամանակ՝ ներառյալ կարգավորող մարմինների ներկայացուցիչների և պետական պաշտոնյաների հետ:

3.3 Մամուլ. Մամուլի հետ հաղորդակցվելիս խոսել Microsoft-ի անունից՝ միայն Microsoft-ի հաղորդակցման գծով ներկայացուցչի կողմից գրավոր ձևով լիազորված լինելու դեպքում:

3.4 Հրապարակայնություն. Մատակարարները չեն կարող տարածել մամուլի հաղորդագրություններ կամ այլ հրապարակումներ՝ Microsoft-ի հետ իրենց հարաբերությունների կամ պայմանագրերի հետ կապված՝ առանց Microsoft-ի պայմանագրային կողմ հանդիսացող անձի նախնական գրավոր համաձայնության:

3.5 Նվերներ և զվարճանքներ. Խելամիտ լինել գործարար սիրալիրության գործողություններում: Ճոխ, ոչ թափանցիկ կամ անօրինական նպատակներ հետապնդող նվերները, հյուրասիրությունը, զվարճանքը, հյուրընկալությունը և ուղևորությունները կարող են դիտարկվել որպես կաշառք, ստեղծել շահերի բախման տպավորություն կամ

ընկալվել որպես ոչ պատշաճ կերպով որոշման վրա ազդելու փորձ: Microsoft-ի աշխատակիցներին գործարար սիրալիրության ցուցաբերումը, եթե դա ընդհանրապես թույլատրելի է, պետք է լինի չափավոր և ոչ հաճախ: Բիզնես առավելությունն ստանալու նպատակով երբեք որևէ բան մի՛ առաջարկեք: Նվեր, զվարճանք կամ որպես սիրալիրության նշան այլ բան առաջարկելու որոշում կայացնելիս նկատի ունեցեք հետևյալ պահանջները՝

- a. Մատակարարներին արգելվում է Microsoft-ի անունից վճարել ճանապարհորդության, կացարանի, նվերների, հյուրընկալության, զվարճանքի կամ պետական ծառայողների համար բարեգործական աջակցության ծախսերը:
- b. Ճանապարհորդական ծախսերը պետք է լինեն խելամիտ, հետապնդեն օրինական գործնական նպատակներ և չպետք է լինեն չափազանց շատ կամ ճոխ: (Ստորև տե՛ս Ճանապարհորդություն բաժինը):
- c. Չառաջարկել արժեքավոր բաներ՝ առաջարկողի համար օգուտ կամ առավելություն ստանալու կամ պահպանելու նպատակով, և չառաջարկել այնպիսի բաներ, որոնք կարող են ազդել որոշման վրա, փոխել Microsoft-ի աշխատակցի միտքը կամ պարտավորեցնել նրան:
- d. Չվարճանքն ու հյուրասիրությունը պետք է լինեն համեստ, ոչ հաճախ և կրեն սովորական գործնական բնույթ:
- e. Մատակարարները չեն կարող ցուցաբերել որևէ գործնական սիրալիրություն, եթե դա չի թույլատրվում սույն Կանոններով կամ Մատակարարի նվիրատվության քաղաքականությամբ:
- f. Տեղեկացված լինել սահմանափակումների մասին: Մատակարարի կողմից Microsoft-ի աշխատակցին ցանկացած սիրալիրության ցուցաբերման արժեքը չպետք է գերազանցի աշխատակցի բիզնես միավորի և երկրի քաղաքականությամբ թույլատրելի սահմանափակումները: Microsoft-ի բիզնես միավորի և երկրի քաղաքականությամբ թույլատրելի սահմանափակումները կարող են բոլորովին արգելել սիրալիրության ցուցաբերումները կամ սահմանել տարբեր չափերի առավելագույն գումարային սահմանափակումներ: Մատակարարի պարտավորությունն է հարցնել ստացողից, թե որոնք են թույլատրելի սահմանափակումները և չգերազանցել դրանք:
- g. Մատակարարներին չի թույլատրվում ցանկացած արժեքի նվերներ առաջարկել Microsoft-ի Գնումների բաժնի որևէ անդամին կամ նրա ներկայացուցիչներին:
- h. Մատակարարի աշխատակիցների համար ցանկացած խրախուսական միջոցառում պետք է կազմակերպվի Մատակարարի կողմից, և ոչ թե Microsoft-ի: Եթե Մատակարարի աշխատակիցները ցանկանում են մասնակցել խրախուսական միջոցառման Microsoft-ի լրիվ դրույքով աշխատակիցների հետ, Microsoft-ը պետք է Մատակարարի հետ համատեղ ֆինանսավորման պլան մշակի:

3.6 Շահերի բախում. Microsoft-ի աշխատակիցների հետ հարաբերությունների վերաբերյալ Microsoft-ի կողմից տրված հարցերին պատասխանելիս լինել ազնիվ,

անկեղծ ու շիտակ: Խուսափել չարաշահումներից և շահերի բախումից կամ դրանցից որևէ մեկի հնարավորությունից: Մատակարարները չպետք է անմիջական գործարք կատարեն Microsoft-ի որևէ աշխատակցի հետ, որի կինը (ամուսինը), զուգընկերը կամ ընտանիքի այլ անդամներից մեկը կամ ազգականը ֆինանսական հետաքրքրվածություն ունի Մատակարարից:

3.7 Ինսայդերական առևտուր. Ինսայդերական առևտուրն արգելված է: Համաձայն Արժեթղթերի մասին դաշնային օրենքների՝ դուք չեք կարող գնել կամ վաճառել Microsoft-ի կամ այլ ընկերության արժեթղթեր, եթե ունեք տեղեկություններ Microsoft-ի կամ մեկ այլ ընկերության մասին, որը (1) հասանելի չէ ներդրողներին և (2) կարող է ազդել ներդրողի՝ արժեթուղթ գնելու կամ վաճառելու որոշման վրա:

3.8 Ճամփորդություն. Բոլոր մատակարարները պետք է հետևեն [Մատակարարների ճամփորդության ուղեցույցին](#):

3.9 Ենթակապալառուների ներգրավումը. Նախքան Microsoft-ի նկատմամբ Մատակարարի պարտավորությունները կատարելու համար ենթակապալառուի ներգրավումը, որը նաև պարտավոր է Մատակարարի և Microsoft-ի միջև կնքված որևէ պայմանագրում նշված մյուս բոլոր պարտավորությունները կատարել, հարկավոր է ձեռք բերել Microsoft-ի գրավոր համաձայնությունը:

4. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ և ԱԶՆԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Microsoft-ն ակնկալում է, որ իր Մատակարարները (1) ամբողջովին կհամապատասխանեն աշխատանքային օրենսդրությանը, (2) կկիսեն մարդու իրավունքների և աշխատավայրում հավասար պայմանների ապահովման իր կողմնակցությունը, ինչպես սահմանված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, Մարդու իրավունքների վրա բիզնեսի ազդեցության մասին ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքներով, ՄԱԿ-ի համաշխարհային դաշնագրի սկզբունքներով և [Աշխատանքի միջազգային կազմակերպության \(ԱՄԿ\) Աշխատանքի հիմնական ստանդարտներով](#), և (3) արդյունավետ միջոցներ կձեռնարկեն՝ մարդու իրավունքների և աշխատանքի արդար պայմանների վրա ցանկացած անբարենպաստ ազդեցության բացառման համար, ինչպես նաև կհամագործակցեն որևէ և բոլոր հնարավոր խախտումների բացահայտմանն ուղղված և նման խախտումների հետ կապված հետազա հետաքննությունների ընթացքում:

Microsoft-ի բոլոր Մատակարարները, առանց բացառության, պետք է հետևեն հետևյալ սկզբունքներին՝

a. Խտրականության և անհանդուրժողականության բացառում:

Մատակարարները պետք է ձգտեն ապահովել հետապնդումներից, անօրինական խտրականությունից և հաշվեհարդարներից զերծ աշխատանքային կոլեկտիվ և միջավայր: Մատակարարները պետք է ապահովեն, որպեսզի իրենց գործնական

հարաբերություններում հարգվեն տարբեր ժողովրդագրական խմբերի՝ ներառյալ կանանց և աշխատանքային միգրանտների իրավունքները: Ընդունելով և հարգելով մշակութային տարբերությունները՝ մենք պահանջում ենք, որ Մատակարարները հավասար հնարավորություններ ապահովեն աշխատավայրում, ինչպես նաև նորմալ հարմարություններ, և չդրսևորեն անհանդուրժողականություն կամ խտրականություն աշխատավայրում՝ տարիքի, ծագման, քաղաքացիության, մաշկի գույնի, ընտանեկան կամ բժշկական արձակուրդի, սեռական ինքնության կամ արտահայտման, գենետիկ ինֆորմացիայի, ներգաղթյալի կարգավիճակի, ամուսնական կամ ընտանեկան կարգավիճակի, առողջական վիճակի, ազգային ծագման, ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամության, քաղաքական պատկանելության, արիմիություն անդամակցության, պաշտպանված վետերանի կարգավիճակի, ռասայի, դավանանքի, սեռի (ներառյալ հղիությունը), սեռական կողմնորոշման կամ որևէ այլ հիմքով, որը պաշտպանված է գործող տեղական օրենքներով, կանոնակարգերով և հրամանագրերով:

Մատակարարը չպետք է պահանջի աշխատողներից կամ հավանական աշխատողներից, որպեսզի նրանք անցնեն բժշկական թեստեր՝ ներառյալ հղիության թեստեր, բացառությամբ այն դեպքերի, երբ դա պահանջվում է գործող օրենքներով կամ կանոնակարգերով կամ այն դեպքերում, երբ դա անհրաժեշտ է՝ աշխատավայրում անվտանգության ապահովման համար, և չպետք է ոչ պատշաճ խտրականություն դրսևորի՝ թեստերի արդյունքների հիման վրա: Մատակարարները պետք է հարմարություններ ապահովեն բոլոր հաշմանամների համար՝ օրենքով սահմանված չափով:

- b. **Արգելել մանկական աշխատուժի կիրառումը:** Ոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ մանկական աշխատուժի կիրառում: Մատակարարները չեն կարող աշխատանքի ընդունել 15-ից ցածր, պարտադիր կրթությունն ավարտելու համար պահանջվող տարիքից ցածր կամ աշխատանքի ընդունելու համար օրենքով սահմանված նվազագույն աշխատանքային տարիքից ցածր տարիքի անձանց՝ կախված նրանից, թե դրանցից որն է ավելի բարձր: Մատակարարները պետք է ունենան խախտումների շտկման պլան, որպեսզի երաշխավորեն, որ մանկական աշխատուժի օգտագործման դեպք հայտնաբերելիս Մատակարարները կհետևեն միջազգային ստանդարտներին, տեղական իրավական պահանջներին կամ Microsoft-ի մանկական աշխատուժի խախտումների շտկման պահանջներին: Microsoft-ն աջակցում է երիտասարդ օրինական աշխատուժի ներգրավման բոլոր ձևերը՝ ներառյալ աշխատավայրում ուսուցման օրինական ծրագրերի մշակումը՝ երիտասարդների կրթության նպատակով: Microsoft-ը չի գործակցի որևէ Մատակարարի հետ, ով այսպիսի ծրագրեր է կիրառում խարդախ կամ անազնիվ եղանակով: Մատակարարները պետք է արգելեն 18 տարին չլրացած աշխատողներին կատարել այնպիսի աշխատանք, որը կարող է վտանգել նրանց առողջությունը կամ անվտանգությունը, օրինակ՝ գիշերային, արտաժամյա, ծանր

բեռների փոխադրման և թունավոր կամ վտանգավոր նյութերի հետ կապված աշխատանքներ:

- c. **Արգելել հարկադիր աշխատանքի, բանտարկյալների աշխատանքի և մարդկանց թրաֆիքինգի կիրառումը:** Բոլոր մատակարարներին՝ ներառյալ աշխատուժի հավաքագրման մասնագետները, աշխատանքի տեղավորման գործակալությունները, ենթագործակալությունները և աշխատուժի հավաքագրման ընկերությունները, արգելվում է հարկադիր և բանտարկյալների աշխատանքի, մարդկանց թրաֆիքինգի և սեռական շահագործման կիրառումը: Արգելվում են բոլոր տեսակի հարկադիր աշխատանքները՝ ներառյալ պայմանագրային ստրկությունը, ստիպողական աշխատանքը (ինչպես նաև պարտքի դիմաց ստրկական աշխատանքը, թրաֆիքինգը կամ ստրկական աշխատանքը) և հարկադրված աշխատանքի այլ ձևեր: Կալանավորների աշխատանքի բոլոր ձևերն արգելված են: Արգելվում է թրաֆիքինգին կամ ոչ կամավոր աշխատանքի որևէ ձևին նպաստելը կամ մասնակցելը՝ սպառնալիքի, ուժի, խարդախ պահանջների կամ այլ հարկադրանքի միջոցով: Մատակարարները պետք է ունենան կամավոր աշխատանքի համապատասխանության պլան, որը (1) հիմնված է [ԱՄԿ-ի «Հարկադիր աշխատանքի ցուցանիշների»](#) վրա՝ մատակարարման շղթայում հարկադիր աշխատանքի դեպքերը բացահայտելու համար, (2) նախատեսում է Մատակարարի աշխատակազմի ուսուցման պայմաններ և հարկադրական աշխատանքի խնդիրների հետ կապված նրանց իրազեկվածության բարձրացում, և (3) մանրամասնում է, թե շտկման ինչ ձևեր է Մատակարարը նախատեսում խախտման դեպքում: Բոլոր Մատակարարները պետք է տեղեկացնեն աշխատակիցներին, գործակալներին, աշխատուժի հավաքագրման մասնագետներին, կապալառուներին և ենթակապալառուներին Մատակարարի քաղաքականության մասին, որով արգելվում է մարդկանց թրաֆիքինգը, բանտարկյալների աշխատանքը, հարկադիր աշխատանքը կամ ստրկական աշխատանքի այլ ձևեր, և տրամադրեն դասընթացներ ու ծրագրեր՝ իրազեկվածությունը բարձրացնելու, ռիսկերը տարբերակելու, աշխատակիցների կողմից գեկուցման ձևերի, շտկման գործողությունների և խախտումների համար հնարավոր տուգանքների վերաբերյալ:
- d. **Աշխատակիցներին անձի ինքնությանն առնչվող և անձնական փաստաթղթերի հասանելիության ապահովում:** Մատակարարներին, գործակալներին և ենթագործակալներին արգելվում է աշխատողներից պահանջել «ավանդների» ներդրումներ, պահել և չտալ աշխատողների նույնականացման կամ ներգաղթի փաստաթղթերը (ներառյալ, բայց չսահմանափակվելով, անձնագիրը, վարորդական իրավունքի վկայականը կամ աշխատանքի թույլտվությունը (անկախ նրանից, թե ով է փաստաթուղթը տվող մարմինը) կամ ոչնչացնել, թաքցնել, առգրավել կամ այլ կերպ արգելել այդ փաստաթղթերի հասանելիությունը աշխատողի համար: Աշխատողները պետք է

ունենան աշխատանքից ազատվելու ազատ հնարավորություն՝ տեղական և ազգային օրենքներին կամ կանոնակարգերին համապատասխան՝ առանց անօրինական տուգանքներ վճարելու:

- e. **Քնակհարմարություններ տրամադրելիս Մատակարարը պետք է ապահով կացարան ապահովի:** Եթե Մատակարարը աշխատակիցներին տրամադրում է կացարան կամ հյուրանոցային համար այն երկրում, որտեղ նրանք աշխատելու են, բոլոր տրամադրված կացարանները պետք է համապատասխանեն ընդունող երկրի բնակարանային և անվտանգության ստանդարտներին:
- f. **Ապահովել արտասահմանյան միգրանտ աշխատողների հետադարձ փոխադրումը:** Այն դեպքում, երբ աշխատանքի են ընդունվում աշխատողներ, ովքեր այն երկրից չեն, որտեղ իրականացվում է աշխատանքը, և ովքեր իրենց երկրից ժամանել են ուրիշ երկիր՝ հատուկ Մատակարարի մոտ աշխատելու նպատակով, Մատակարարը պետք է ապահովի այդպիսի աշխատողների հետադարձ փոխադրումը կամ փոխհատուցի աշխատողներին այդ ուղևորության ծախսը՝ աշխատանքից ազատվելիս: Այս պահանջը չի տարածվում մշտական բնակություն ունեցող մասնագիտական հմտություններով աշխատողների վրա, ովքեր աշխատում են կարճաժամկետ կամ երկարաժամկետ հիմունքներով:
- g. **Դիմել համապատասխան պատրաստվածություն ունեցող աշխատուժի հավաքագրման մասնագետների՝ համապատասխանությունն ապահովելու համար:** Մատակարարները պարտավոր են օգտվել աշխատուժի հավաքագրման այնպիսի մասնագետների, ընկերությունների կամ աշխատանքի տեղավորման գործակալությունների ծառայություններից, որոնք ունեն պատրաստվածություն և համապատասխանում են միջազգային ստանդարտներին, այն երկրների տեղական աշխատանքային օրենքներին, որտեղ տեղի է ունենում աշխատուժի հավաքագրումը, կամ Microsoft-ի պահանջներին՝ կախված նրանից, թե որն է ավելի խիստ: Հավաքագրման կամ նմանատիպ այլ վճարները, որոնք գանձվում են աշխատողներից և վճարվում են գործատուին, հավաքագրող գործակալին կամ ենթագործակալին, խստիվ արգելվում են: Եթե պարզվի, որ աշխատողների կողմից այդպիսի վճարներ են տրվել, Մատակարարներից կպահանջվի վերադարձնել այդ վճարներն աշխատողներին:
- h. **Աշխատանքի ընունելիս պարզաբանել աշխատանքային պայմանները:** Մատակարարները պետք է արգելեն անազնիվ և խարդախ գործելաճոհ աշխատանքի ընդունման ժամանակ կամ աշխատանքի ընթացքում: Մատակարարները պետք է աշխատողին տրամադրեն իր համար հասանելի ձևաչափով և լեզվով հիմնական տեղեկությունները աշխատանքային պայմանների վերաբերյալ, ներառյալ աշխատավարձը, լրավճարները, աշխատանքի վայրը, կենցաղային պայմանները, կացության և հարակից ծախսերը

(եթե առկա են), աշխատողից գանձվող ցանկացած այլ ծախսերը և աշխատանքում առկա վտանգները: Այս պարզաբանումները պետք է արվեն նախքան աշխատողին աշխատանքի ընդունելը, և ըստ անհրաժեշտության, աշխատանքի ընթացքում: Բոլոր պայմանագրերում և աշխատողի ձեռնարկներում (որտեղ որ կիրառելի է) պետք է (1) աշխատողին հասկանալի լեզվով հստակ նշված լինեն աշխատանքի պայմանները, և (2) նշված լինեն գործող օրենքներն ու կանոնակարգերը:

- i. **Անհրաժեշտության դեպքում տրամադրել գրավոր աշխատանքային պայմանագրեր կամ համաձայնագրեր:** Եթե պահանջվում է օրենքով կամ պայմանագրով, Մատակարարները պարտավոր են տրամադրել գրավոր աշխատանքային պայմանագիր, աշխատանքի ընդունման պայմանագիր կամ այլ աշխատանքային փաստաթուղթ այն լեզվով, որը աշխատողը հասկանում է, որը պարունակում է մանրամասներ՝ աշխատանքի նկարագրության, աշխատավարձի, հավաքագրման վճարներ գանձելու արգելքների, աշխատանքի վայրի, բնակարանային հարմարությունների և դրանց հետ կապված ծախսերի, արձակուրդների, տրանսպորտային ծախսերի, բողոքարկման ընթացակարգերի մասին, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգը արգելող գործող օրենքների և կանոնակարգերի բովանդակությունը: Եթե աշխատողը պետք է տեղափոխվի՝ աշխատանքը կատարելու համար, ապա աշխատանքային փաստաթուղթը աշխատողին պետք է տրամադրվի այդ տեղափոխությունից առնվազն հինգ օր առաջ: Օտարերկրյա միգրանտ աշխատողները, նախքան իրենց երկրից մեկնելը, պետք է ստանան աշխատանքային պայմանագիր, որում ոչ մի ուղղում կամ փոփոխություն չպետք է կատարվի ընդունող երկիր ժամանելուց հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ փոփոխությունները կատարվում են գործող օրենսդրությանը համապատասխանելու համար և/կամ հավասար կամ ավելի լավ աշխատանքային պայմաններ ապահովելու համար:

- j. **Ապահովել արդար փոխհատուցում:** Մատակարարները պետք է տրամադրեն արդար փոխհատուցում բոլոր աշխատակիցներին և աշխատողներին՝ ներառյալ մշտական, ժամանակավոր կամ կարճաժամկետ աշխատանք կատարող, միգրանտ աշխատողներին, աշակերտներին և պայմանագրային աշխատողներին: Այդպիսի փոխհատուցումը պետք է համապատասխանի տեղական օրենսդրությամբ պահանջվող իրավական նվազագույն ստանդարտներին: Հաշմանդամություն ունեցող աշխատողները, որոնց աշխատավարձը կարգավորվում է Ազնիվ աշխատանքային ստանդարտների մասին օրենքի Բաժին 14(գ)-ով, պետք է ստանան ոչ պակաս, քան 13658 Գործադիր հրամանով սահմանված նվազագույն լրիվ աշխատավարձի դրույքաչափը: Բոլոր աշխատակիցներին և աշխատողներին տրամադրվում է աշխատավարձի մասին հստակ, ժամանակին և հասկանալի հաշվետվություն, որը պարունակում է բավարար տվյալներ՝ կատարված աշխատանքի դիմաց ճշգրիտ փոխհատուցումը հաստատելու համար:

Մատակարարները չեն կարող կիրառել աշխատավարձից պահումները որպես կարգապահական միջոց: Ազգային կամ տեղական օրենսդրությամբ չնախատեսված պահումներ աշխատավարձից թույլատրվում են միայն համապատասխան աշխատողի հստակ գրավոր արտահայտված և կամավոր տրամադրված համաձայնությամբ: Կարգապահական բոլոր միջոցները պետք է գրանցվեն: Սովորական աշխատանքային շաբաթվա համար վճարված աշխատավարձերն ու նպաստները պետք է համապատասխանեն տեղական և ազգային իրավական չափանիշներին: Մատակարարները պարտավոր են իրավական ստանդարտներին համապատասխանող աշխատողներին տրամադրել ոլորտում ակնկալվող մակարդակին համարժեք և Microsoft-ի պահանջներին համապատասխանող նպաստներ:

k. **Աշխատակիցների նկատմամբ ցուցաբերել արժանապատիվ և հարգալից վերաբերմունք:** Մատակարարները չպետք է ցուցաբերեն դաժան և անմարդկային վերաբերմունք՝ ներառյալ բռնություն, գենդերային հիմքով բռնություն, սեռական կամ այլ ոտնձգություններ, այդ թվում՝ հոգեբանական ոտնձգություններ կամ սպառնալիքներ, սեռական բռնություն, մարմնական պատիժ, հոգեբանական և ֆիզիկական ճնշում, ահաբեկում կամ հանրային պարսավանք: Արգելվում են բանավոր վիրավորանքը կամ ահաբեկման այլ ձևերը: Մատակարարները պետք է որդեգրեն մարդասիրական վերաբերմունքի ցուցաբերման քաղաքականություն և հսկեն վերահսկիչներին, որպեսզի վերջիններս համապատասխան վարքագիծ ապահովեն: Այս պահանջները սատարող կարգապահական քաղաքականությունն ու ընթացակարգերը պետք է հստակ սահմանվեն և հաղորդվեն աշխատողներին:

l. **Համապատասխանել աշխատանքային ժամերի և հանգստյան օրերի պահանջներին:** Մատակարարներին արգելվում է պահանջել աշխատողներից աշխատել ավելի, քան միջազգային ստանդարտներով՝ ներառյալ Աշխատանքի միջազգային կազմակերպության, ստանդարտ աշխատանքային ժամերի մասին կոնվենցիաներով (կոնվենցիաներ 1, 14 և 106), տեղական և ազգային օրենքներով, Microsoft-ի պահանջներով կամ ազատորեն կնքված կոլեկտիվ համաձայնագրով սահմանված օրական առավելագույն ժամաքանակը՝ կախված նրանից, թե որն է ամենաքիչը: Մատակարարները պետք է ապահովեն, որ արտաժամյա աշխատանքը լինի կամավոր և վճարվի տեղական և ազգային օրենքներին կամ կանոնակարգերին համապատասխան: Աշխատանքային շաբաթը չպետք է ներառի ավելի, քան շաբաթական 60 ժամ, ներառյալ արտաժամյա աշխատանքը, բացառությամբ արտակարգ իրավիճակների կամ բացառիկ դեպքերի: Աշխատողներին պետք է տրամադրվի առնվազն մեկ հանգստյան օր՝ յուրաքանչյուր 7-օրյա աշխատանքային շաբաթվա համար: Մատակարարները պետք է պահպանեն աշխատակիցների աշխատանքային ժամերի և վճարումների արձանագրությունները՝ տեղական և ազգային օրենքներին կամ

կանոնակարգերին համապատասխան, և ներկայացնեն դրանք Microsoft-ին՝ ըստ պահանջի:

- m. **Ապահովել միավորումներ ստեղծելու ազատությունը և կոլեկտիվ բանակցությունների իրավունքը:** Մատակարարները պետք է հարգեն աշխատողների միավորումներ ստեղծելու, կոլեկտիվ բանակցությունների և խաղաղ հավաքների իրավունքների ազատությունը (ներառյալ այդպիսի գործողություններից զերծ մնալու իրավունքը)՝ համաձայն տեղական իրավական պահանջների և պարտավորությունների, միջազգային ստանդարտների, ինչպիսիք են Աշխատանքի միջազգային կազմակերպության ստանդարտները կամ Microsoft-ի պահանջները՝ կախված նրանից, թե որն է ավելի խիստ: Աշխատողները չպետք է ենթարկվեն ահաբեկման, հետապնդման կամ ճնշումների՝ այդ իրավունքի իրացման համար: Երբ տեղական օրենքները կամ հանգամանքները սահմանափակում են այս իրավունքը, Մատակարարները պետք է կիրառեն իրենց աշխատողների հետ աշխատանքի և աշխատավայրի խնդիրների հետ կապված բովանդակալից քննարկումների այլ եղանակներ:
- n. **Ապահովել բողոքարկման արդյունավետ ընթացակարգեր և աշխատել Microsoft-ի հետ՝ մարդու իրավունքների հայտնաբերված խախտումները վերացնելու համար:** Մատակարարները պետք է իրազեկեն աշխատակիցներին բողոք ներկայացնելու արդյունավետ ընթացակարգերի մասին, որոնց միջոցով նրանք կարող են ղեկավարության ուշադրությունը հրավիրել աշխատավայրի խնդիրներին՝ ներառյալ ոտնձգություններին և խտրականությանը առնչվող խնդիրներին, համապատասխան լուծում ստանալու համար: Աշխատողների համար պետք է ապահով միջավայր ապահովել, որպեսզի կարողանան իրենց բողոքներն ու արձագանքը ներկայացնել: Մատակարարները պետք է պարբերաբար վերանայեն գեկուցման այս ընթացակարգերը: Բողոքարկման ընթացակարգերը պետք է լինեն հասանելի, մշակութային առումով ընդունելի և, անհրաժեշտության դեպքում, ներառեն անսնուն գեկույց ներկայացնելու հնարավորություն: Աշխատողները և/կամ նրանց ներկայացուցիչները պետք է ազատ հաղորդակցվելու և ղեկավարության հետ աշխատանքային պայմանների և ղեկավարման մեթոդների հետ կապված իրենց գաղափարներով ու խնդիրներով կիսվելու հնարավորություն ունենան՝ չվախենալով խտրականության, ճնշումների, ահաբեկման կամ ոտնձգությունների ենթարկվելուց: Մատակարարները պետք է աշխատողներին պարբերաբար տեղեկացնեն և սովորեցնեն բողոքարկման բոլոր ընթացակարգերի մասին: Խստիվ արգելվում են աշխատողների նկատմամբ բոլոր տեսակի հաշվեհարդարները՝ նրանց կողմից աշխատավայրի խնդիրների մասին բարձրաձայնելու համար: Մատակարարները չպետք է հաշվեհարդար տեսնեն աշխատողներից, ովքեր բարձրաձայնում են աշխատավայրի խնդիրների, ինչպես նաև տեղական օրենսդրության պահանջներով կամ միջազգային ստանդարտներով ամրագրված աշխատողի իրավունքների ոտնահարման մասին՝

Նրանց նկատմամբ անձնական հարձակումների, ահաբեկումների կամ այլ սպառնալիքների միջոցով: Մատակարարները համաձայնում են աշխատել Microsoft-ի հետ՝ վերացնելու մարդու իրավունքների հայտնաբերված խախտումները և դրանց հետ կապված անբարենպաստ հետևանքները:

o. Այն Մատակարարների համար, որոնց աշխատակիցները ֆիզիկապես գտնվում են ԱՄՆ-ում, և որոնք Microsoft-ի ցանկացած պայմանագրի շրջանակներում աշխատանք են կատարում, որը պահանջում է հասանելիություն Microsoft-ի հաստատություններին կամ ցանցին՝

- i. Մատակարարը պետք է ներկայացնի աշխատակցի կարիերայի զարգացման ծրագիր:
- ii. Ցանկացած անձ, ով Մատակարարի կողմից ընդգրկվել է որպես Microsoft-ի ծրագրի աշխատող, պետք է լինի Մատակարարի կամ Մատակարարի կողմից լիազորված ենթակապալառուի աշխատակիցը:
- iii. Մատակարարը պետք է ապահովի, որ ԱՄՆ-ում տեղակայված աշխատակիցները, ովքեր աշխատում են Մատակարարի (կամ Մատակարարի որևէ ենթակապալառուի) համար շաբաթվա մեջ 30 և ավելի ժամ, ստանան աշխատողի բժշկական նպաստներ՝ 2010 թվականի Հիվանդների պաշտպանության և մատչելի ինսամքի վերաբերյալ ակտին («ACA») և դրան առնչվող ժամանակ առ ժամանակ փոփոխվող օրենսդրական ակտերին և կանոնակարգերին համապատասխան: Այդպիսի բժշկական ապահովագրությունը պետք է լինի «մատչելի» և «նվազագույն արժեքի չափով», ինչպես որ այս սահմանումները տրված են ACA-ում, և Մատակարարը պետք է տրամադրի այս ապահովագրությունը ցանկացած աշխատակցի, ով աշխատում է Microsoft-ի ծրագրում, նույնիսկ եթե Մատակարարը պարտավոր չէ առաջարկել այս ապահովագրությունը՝ համաձայն ACA-ի: Եթե Մատակարարը ծանուցում է ստանում պետական մարմնի կողմից, որ սույն բժշկական ապահովագրությունը չի համապատասխանում ACA-ին, կամ որ համաձայն ACA-ի՝ տուգանք է գանձվելու սույն բժշկական ապահովագրության առնչությամբ, Մատակարարը պարտավոր է 30 օրվա ընթացքում գրավոր ծանուցում ներկայացնի Microsoft-ին:
- iv. Եթե Մատակարարը ունի ԱՄՆ-ում գտնվող 50-ից ավելի աշխատակիցներ, Մատակարարը պետք է որոշակի նվազագույն նպաստներ տրամադրի Մատակարարի համապատասխանող աշխատակիցների համար: «Մատակարարի համապատասխանող աշխատակիցը» սահմանվում է որպես ԱՄՆ-ում գտնվող Մատակարարի աշխատակից, ով նախորդ 12 ամիսների ընթացքում Մատակարարի համար աշխատել է առնվազն 1500 ժամ և ընդգրկված է Microsoft-ի ծրագրի կամ պայմանագրային համաձայնագրի աշխատակազմում, որը պահանջում է հասանելիություն

Microsoft-ի ցանցին և/կամ հաստատություններին: Մատակարարը պետք է Մատակարարի համապատասխանող աշխատակցին տրամադրի՝

- Մատակարարի ողջամիտ հայեցողությամբ կառավարվող առնվազն 10 օր վարձատրվող արձակուրդ և հիվանդության պատճառով աշխատանքից 5 օր վարձատրվող բացակայելու իրավունք կամ 15 օր առանց տարբերակման վարձատրվող արձակուրդ:
- Առնվազն 12 շաբաթ տևողությամբ վարձատրության 66 %-ի չափով վարձատրվող դեկրետային արձակուրդ՝ շաբաթական \$1000 առավելագույն սահմանաչափով, կամ Վաշինգտոն նահանգի վճարովի ընտանեկան արձակուրդի մասին օրենքին համապատասխան վճարովի դեկրետային արձակուրդի գումար:

5. ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Microsoft-ի Մատակարարները պետք է մշակեն և իրականացնեն առողջության և անվտանգության կառավարման ընթացակարգեր իրենց գործունեության բոլոր ասպարեզներում: Մատակարարները պետք է առանց բացառության՝

- a. Հետևեն աշխատանքային անվտանգության ու առողջության վերաբերյալ բոլոր գործող օրենքներին ու կանոնակարգերին՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով, աշխատանքային անվտանգության, արտակարգ իրավիճակներին պատրաստվածության, աշխատանքային վնասվածքների և հիվանդությունների, արդյունաբերական հիգիենայի, ծանր ֆիզիկական աշխատանքի, Էրգոնոմիկայի, մեքենաների անվտանգության, սանիտարական պայմանների ապահովման, սննդի և կացարանի վերաբերյալ պահանջները, ինչպես նաև Microsoft-ի խնդրանքով տրամադրեն համապատասխանության ապացույցներ:
- b. Ապահովեն անվտանգ և առողջ աշխատանքային միջավայր բոլոր աշխատակիցների համար, միջոցներ ձեռնարկեն՝ աշխատանքային միջավայրում առկա վտանգների պատճառները կառավարելու և նվազագույնի հասցնելու համար, և խոցելի խմբի պաշտպանության համար վերահսկողություն իրականացնեն:
- c. Ստեղծեն աշխատանքային առողջապահության և անվտանգության այնպիսի կառավարման համակարգ, որն առնվազն պետք է արտացոլի, որ առողջապահության և անվտանգության կառավարումը բիզնեսի անբաժանելի մասն է, հնարավորություն է տալիս ղեկավարող դեր ստանձնել, խրախուսում է աշխատակիցների մասնակցությունը՝ քաղաքականություն, պաշտոններ, պարտականություններ և պատասխանատվություն սահմանելու համար, ապահովում է ռիսկերի և վտանգների որոշումն ու գնահատումը, ինչպես նաև տրամադրում է համապատասխան հաղորդակցման միջոցներ՝ առողջապահական և անվտանգության մասին ինֆորմացիան աշխատակիցներին հասանելի դարձնելու համար: Կառավարման այս համակարգը պետք է ներառի արտակարգ

դեպքերի գրանցման, հետաքննության և շտկման գործողությունների կազմակերպման ընթացակարգեր և գործընթացներ:

- d. Արգելվեն անօրինական թմրանյութերի օգտագործումը, պահպանումը, տարածումը կամ վաճառքը:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ և ԴՐԱ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԵՏԱՈՒՄ

Microsoft-ն ընդունում է շրջակա միջավայրի պաշտպանության, ինչպես նաև շրջակա միջավայրի կայունությունը խթանելու իր սոցիալական պատասխանատվությունը: Մենք ակնկալում ենք, որ մատակարարները կաջակցեն մեր կորպորատիվ հանձնառությանը՝ ակտիվորեն նվազեցնել ածխածնի արտանետումները, նվազեցնել ջրի օգտագործումը և նվազագույնի հասցնել թափոնների առաջացումը: Microsoft-ի բոլոր մատակարարները, առանց բացառության, պետք է հետևեն հետևյալ սկզբունքներին՝

- a. Հետևեն բոլոր գործող բնապահպանական օրենքներին, կանոնակարգերին և միջազգային պայմանագրերին, ներառյալ վտանգավոր նյութերի, մթնոլորտային և ջրային արտանետումների և թափոնների վերաբերյալ օրենքներն ու կանոնակարգերը: Համապատասխան պայմանագրերը ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալներով՝ Մինամատայի կոնվենցիա, Ստոկհոլմի համաձայնագիրը կայուն օրգանական աղտոտիչների մասին (ԿՕԱ-ների մասին համաձայնագիր) և Բազելի կոնվենցիա:
- b. Հետևեն բոլոր գործող օրենքներին և կանոնակարգերին, որոնք վերաբերում են որոշակի նյութերի օգտագործման արգելմանը կամ սահմանափակմանը պրոդուկտների կամ փաթեթավորման արտադրության մեջ կամ դրանց մեջ օգտագործվող նյութերում:
- c. Մատակարարը համաձայնում է հետևել Microsoft-ի բոլոր պահանջներին, որոնք վերաբերում են պրոդուկտի և փաթեթավորման մակնշմանը և պիտակավորմանը, նյութի պարունակությանը, վերամշակմանը և օգտահանմանը, ինչպես նշված է Microsoft-ի բիզնես պայմանագրերում:
- d. Ձեռք բերեն և պահպանեն պահանջվող բոլոր բնապահպանական թույլտվությունները, կարգավորող մարմինների հաստատումներն ու գրանցումները:
- e. Բացառեն կամ չեզոքացնեն բոլոր տեսակի թափոնները՝ ներառյալ ջրի բացթողումները և Էներգիայի կորուստը՝ մատակարարի օբյեկտներում իրականացնելով պահպանման համապատասխան միջոցառումներ՝ (1) պահպանմանը միտված տեխնիկական սպասարկման և արտադրական գործընթացների միջոցով, (2) հնարավորության դեպքում, նախքան օգտահանումը՝ նյութերի կրճատման, վերաօգտագործման և վերամշակման (այդ կարգով) ռազմավարությունների իրականացման միջոցով, և հնարավորության դեպքում նախքան օգտահանումը փնտրեն և օգտագործեն վերականգնվող Էներգիա:

- f. Բացահայտեն քիմիական նյութերը, թափոնները կամ այլ նյութերի արտանետումները, որոնք կարող են վտանգ ներկայացնել շրջակա միջավայրի համար, և համապատասխան կերպով կառավարեն դրանք՝ նյութերի անվտանգ մշակումը, փոխադրումը, պահպանումը, օգտագործումը, վերաօգտագործումը, վերամշակումը և օգտահանումն ապահովելու համար: Օգոնային շերտը քայքայող նյութերը պետք է արդյունավետորեն կառավարվեն և հեռացվեն՝ Մոնրեալի արձանագրության, Կիգալիի ուղղման և գործող կանոնակարգերի համաձայն:
- g. Մատակարարները պետք է բացահայտեն 1, 2 և 3 ծավալի ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների լրիվ, համապատասխան և ճշգրիտ տվյալները և/կամ բաղադրիչները, որոնք անհրաժեշտ են ՋԳ արտանետումների տվյալների հաշվարկման համար [CDP](#)-ի միջոցով կամ այլընտրանքային մեթոդով, որը կտրամադրվի Microsoft-ի կողմից: Մատակարարներից կարող է պահանջվել նաև տրամադրել անկախ կամ երրորդ կողմի հավաստիացում նման բացահայտված արտանետումների տվյալների վերաբերյալ: Մատակարարները նաև պետք է նախատեսեն և իրականացնեն պլաններ՝ նվազեցնելու իրենց ջերմոցային գազերի բացարձակ արտանետումները առնվազն 55 %-ով մինչև 2030 թվականը կամ այլընտրանքային կրճատման թիրախ՝ համաձայն իրենց մատակարարների պայմանագրում նշված կամ Microsoft-ի հետ գրավոր այլ հաղորդակցության բազային դրույթների: Տվյալների բացահայտման, հավաստիացման, կրճատման նպատակների և պլանավորված կրճատումների հասնելու հատուկ պահանջներ, ներառյալ մատակարարների վերջնաժամկետները, կսահմանվեն նրանց մատակարարի պայմանագրում կամ Microsoft-ի հետ գրավոր այլ հաղորդակցության մեջ:

7. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Microsoft-ի Մատակարարները պարտավոր են հարգել մտավոր սեփականության իրավունքները, պաշտպանել գաղտնի տվյալները, հետևել անվտանգության չափանիշներին, քաղաքականությանը և վերահսկմանը, հետևել անձնական տվյալների պաշտպանության կանոններին ու կանոնակարգերին, ինչպես նաև կիրառել Microsoft-ի Փաստաթղթերի պահպանման քաղաքականությունը և պահպանման ժամանակացույցը, եթե կիրառելի է: Microsoft-ի բոլոր Մատակարարները, առանց բացառության, պետք է հետևեն հետևյալ սկզբունքներին՝

7.1 Բիզնեսի շարունակականություն

Ապահովել չափելի արտակարգ իրավիճակների արձագանքման և աղետների վերականգնման ծրագրերի տվյալների փաստաթղթավորված պահպանում՝ տվյալների ու ինտելեկտուալ սեփականության պաշտպանությունը և Microsoft-ին ծառայություններ և/կամ ապրանքներ տրամադրող բիզնեսի շարունակականությունը ապահովելու համար: Ծրագիրը պետք է ներառի միջոցների ներդրման ընթացակարգեր, նվազագույնը շարունակականության և վերականգնման ծրագրեր, հետևյալ իրավիճակների համար՝ եղանակի կամ այլ բնական աղետներ, աշխատուժի կամ այլ ռեսուրսների սահմանափակումներ, համակարգի և/կամ տեխնիկական

միջոցների բացակայություն կամ անհասանելիություն, ԷլեկտրաԷներգիայի բացակայություն և հեռահաղորդակցության բացակայություն: Մատակարարը առնվազն տարեկան մեկ անգամ պետք է վերանայի և ստուգի իրենց բիզնեսի շարունակականության ծրագիրը՝ ապահովելու համար, որ այն լիովին համապատասխանի շարունակականության կառավարման լավագույն ստանդարտներին և առանց վերոնշյալը սահմանափակելու՝ համապատասխանի Microsoft-ի բոլոր պահանջներին:

7.2 Ֆիզիկական և մտավոր սեփականություն

- a. Պաշտպանեն և պատասխանատու կերպով օգտագործեն Microsoft-ի ֆիզիկական և մտավոր ակտիվները՝ ներառյալ մտավոր սեփականությունը, նյութական սեփականությունը, պաշարները, նյութերը և սարքավորումները՝ այդ ակտիվներն օգտագործելու համար Microsoft-ի լիազորությունն ունենալու դեպքում:
- b. Հարգեն և պաշտպանեն բոլոր կողմերի մտավոր սեփականության իրավունքները՝ օգտագործելով միայն այնպիսի տեղեկատվական տեխնոլոգիաներ և ծրագրեր, որոնք ձեռք են բերվել օրինական կերպով և լիցենզավորված են: Օգտագործեն ծրագրերը, սարքավորումները և բովանդակությունը՝ միայն դրանց համապատասխան լիցենզիաներին կամ օգտագործման պայմաններին համաձայն:
- c. Օգտագործեն Microsoft-ի կողմից տրամադրված տեղեկատվական տեխնոլոգիաներն ու համակարգերը (ներառյալ Էլփոստը)՝ միայն Microsoft-ի լիազորված բիզնես գործունեության հետ կապված նպատակների համար: Microsoft-ը խստիվ արգելում է Մատակարարներին օգտագործել Microsoft-ի կողմից տրամադրված տեխնոլոգիաներն և համակարգերը՝ (1) ստեղծելու, մուտք գործելու, պահպանելու, տպելու, հայցելու կամ ուղարկելու համար որևէ նյութ, որն անհրաժեշտ է, անհանգստացնող, սպառնացող, վիրավորական, սեռական բնույթի կամ այլ անարգական կամ ոչ պատշաճ բովանդակությամբ, կամ (2) ուղարկելու համար ցանկացած կեղծ, նսեմացնող կամ չարամիտ հաղորդակցություն:
- d. Microsoft-ի աշխատակիցների ցանկացած խնդրանք՝ օգտագործելու Microsoft-ի տեխնոլոգիաների կամ համակարգերի միջոցով ձեռք բերված ինֆորմացիան, արգելվում է:
- e. Պահպանեն Microsoft-ի և ուրիշների մտավոր սեփականության իրավունքները՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ հեղինակային իրավունքները, արտոնագրերը, ապրանքանշանները և առևտրային գաղտնիքները: Կառավարեն տեխնոլոգիաների և «նոու-հաու»-ի փոխանցումն այնպես, որպեսզի ապահովվի մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը:
- f. Microsoft-ի սեփականությունը հանդիսացող կամ վարձակալված սարքավորումներում պահպանվող կամ դրանցով փոխանցվող բոլոր տվյալները համարվում են Microsoft-ի սեփականությունը: Microsoft-ը կարող է վերահսկել կորպորատիվ ցանցի և բոլոր համակարգերի (ներառյալ Էլփոստի) օգտագործումը և կարող է հասանելիություն ունենալ Microsoft-ի ցանցի օգտագործմամբ պահպանվող կամ փոխանցվող բոլոր տվյալներին:

- g. Microsoft-ի սարքի տեխնիկական վիճակի սահմանափակումներին հետևելու համար, եթե ձեր պաշտոնի համար alias@microsoft.com հաշիվ է հատկացված, ձեզանից կպահանջվի մուտք գործել Microsoft-ի ռեսուրսներ միայն Microsoft-ով կառավարվող սարքով, կամ ձեզ հարկավոր կլինի օգտագործել վիրտուալացման ծառայություն (Windows Virtual Desktop)՝ ռեսուրսներ մուտք գործելու համար, այդ թվում Eլփոստ, Teams կամ այլ հավելվածներ կամ ծառայություններ:

7.3 Անվտանգություն

- a. Սերտորեն համագործակցել Microsoft ծրագրի նշանակված պատասխանատու սեփականատիրոջ հետ՝ հասկանալու և հետևելու անվտանգության չափանիշներին, քաղաքականությանը և վերահսկմանը՝ ապրանքներ, ծառայություններ կամ ծրագրակազմ տրամադրելիս:
- b. Բացահայտել և համոզվել, որ հայտնաբերված թերություններն անմիջապես շտկվում են:
- c. Չտրամադրել հասանելիություն Microsoft-ի կամ հաճախորդի տվյալներին՝ առանց բիզնեսի համար օրինական անհրաժեշտության և իրավասու սեփականատիրոջ թույլտվության:
- d. Չըջանցել անվտանգության վերահսկողությունը, սահմանափակումները կամ անվտանգության ցանկացած այլ միջոցներ:
- e. Չտրամադրել հաշվի մուտքի տվյալները ուրիշներին և միշտ վավերացնել ինքնությունը՝ տրամադրված հաշվի մուտքի տվյալներով:
- f. Չվերափոխել կամ երրորդ կողմի հաշվի մուտքի տվյալների հետ համապատասխանեցնել Microsoft-ի մուտքի տվյալերը:
- g. Ուղիղ վերահսկողություն ունենալ կորպորատիվ և անձնական սարքերի վրա և միշտ արգելափակել կամ պաշտպանել սարքերը, երբ դրանք չեն օգտագործվում:
- h. Եթե Microsoft-ի գույքը կամ անձնական սարքը, որտեղ Microsoft-ի բիզնեսին առնչվող տվյալներ էին պահպանվում, կորել է կամ գողացել են, հնարավորինս շուտ այդ մասին [հաղորդում ներկայացնել](#):
- i. Microsoft-ի հաստատությունում գտնվելիս աշխատողի մուտքի քարտը պետք է պարզորոշ երևա: Համոզվել, որ Microsoft-ի հաստատություն մտնելիս այցելուները գրանցվել են ընդունարանում: Չգուշացնել բոլորին, ովքեր ցույց չեն տալիս իրենց մուտքի քարտը, և ուղեկցել նրանց դեպի Microsoft-ի ամենամոտ ընդունարանը/անվտանգության ծառայության կետը:
- j. Համակարգչի ծրագիրը պարբերաբար թարմացնել և տեղադրել թարմացումները:
- k. Չներբեռնել կամ տեղադրել անվստահելի, չարտոնագրված, արգելված կամ անօրինական ծրագիր ցանկացած սարքում կամ համակարգում, որը հասանելիություն կունենա Microsoft-ի բիզնեսին առնչվող տվյալներին կամ ծառայություններին:
- l. Համոզվել, որ անձնական սարքերը, որոնք օգտագործվում են Microsoft-ի բիզնեսը վարելու համար, թարմացված են և գրանցված են Modern Access սարքերի կառավարման համակարգում:

- m. Հնարավորինս շուտ հաղորդել ցանկացած հնարավոր դեպքի մասին, որն առնչվում է Microsoft-ի հաճախորդների տվյալների հետ (լինի դա ընկերությունում, թե գործընկերոջ կամ Մատակարարի հետ կապված):

7.4 Գաղտնիություն

- a. Հետևեն անձնական և այլ տվյալների պաշտպանության տեղական օրենքներին:
- b. Ներկայացնեն անձնական տվյալների պաշտպանության հստակ և ճշգրիտ ծանուցումներ՝ անձնական տվյալների հավաքման կամ մշակման ժամանակ:
- c. Հարգեն անձնական տվյալների պաշտպանության ընտրությունը՝ օգտագործելով տվյալները՝ միայն Microsoft-ի ներկայացուցիչների կամ Microsoft-ի հաճախորդների հետ համաձայնեցված:
- d. Պաշտպանեն տվյալները՝ ստեղծելով անվտանգ պրոդուկտներ և ծառայություններ:
- e. Համագործակցեն Microsoft-ի կանոնների պահպանման գործում:

7.5 Կորպորատիվ արձանագրությունների և ներքին բիզնես տեղեկատվության պահպանում (բոլոր ձևաչափերով). Ստորև ներկայացված պահանջները տարածվում են տեղեկատվական ակտիվների բոլոր ձևաչափերի վրա, ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ձեռնարկություններում:

- a. Բիզնեսին առնչվող բոլոր արձանագրությունները, որոնք ստեղծվել են, կառավարվում են կամ կիրառվում են Microsoft-ի հաստատություններում կամ Microsoft-ի սարքավորումներով/գործիքներով, պետք է պահպանվեն՝ համաձայն Microsoft-ի Փաստաթղթերի պահպանման քաղաքականության, Կորպորատիվ պահպանման ժամանակացույցի և Microsoft-ի կողմից սահմանված այլ կանոնակարգերի:
- b. Եթե այլ բան նշված չէ, Microsoft-ը կպահպանի իր սեփականության և Microsoft-ի հաստատություններից դուրս ստեղծված, կառավարվող կամ կիրառվող ամբողջ տեղեկատվության և/կամ Microsoft-ի սարքավորումների/գործիքների վերահսկման բոլոր իրավունքները, ինչպես նկարագրված է Microsoft-ի հետ կնքված պայմանագրում:
- c. Որոշ դեպքերում Մատակարարից կարող է պահանջվել պահպանել, հանել կամ այլ կերպ տրամադրել տվյալներ Microsoft-ին՝ պայմանագրով սահմանված ժամկետում, իսկ իրավական կամ առևտրական հարցերի դեպքում տվյալների պահպանումը կարող է չմտնել այդ պարտավորության մեջ:

8. ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑ

Ուսուցման կանոնների պահպանում Մատակարարները պետք է ապահովեն Microsoft-ի նախագծերում աշխատող իրենց աշխատակիցների և լիազորված ենթակապալառուների իրազեկվածությունը՝ հասկանալու և հետևելու համար

Մատակարարի վարքագծի կանոններին, գործող օերնքներին և կանոնակարգերին և համընդհանուր ընդունված ստանդարտներին:

- a. Մատակարարը պարտավոր է ամեն տարի անցկացնել Մատակարարի վարքագծի կանոնների ուսուցում բոլոր աշխատակիցների և լիազորված ենթակապալառուների համար, ովքեր աշխատում են Microsoft-ի նախագծերում:
- b. Մատակարարը պետք է անցկացնի այս դասընթացը Microsoft-ի կողմից ներկայացված երրորդ կողմի դասընթացների հարթակի միջոցով: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ՄՎԿ-ի դասընթացի հաճախակի տրվող հարցերը (ՀՏՀ) [Մատակարարի վարքագծի կանոնների վերկայքում](#):
- c. Ուսուցման արձանագրությունները և պահանջներին համապատասխանության ատեստավորումը, որոնք պահվում են երրորդ կողմի ուսուցման հարթակում, ենթակա են աուդիտի:

Բացի վերը նշված Մատակարարի ուսուցման պարտավորությունների, Microsoft-ն ուսուցում է առաջարկում բոլոր Արտաքին աշխատակիցներին, որոնց համար պահանջվում են Microsoft-ի կորպորատիվ ցանցի և/կամ հաստատությունների մուտքի տվյալներ՝ նախքան իրենց մուտքի իրավունքի ձեռք բերումը:

9. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ MICROSOFT ACCESS-Ի ՀԱՄԱՐ

Ցանկացած արտաքին կողմի՝ ներառյալ մատակարարների, կապալառուների, ենթակապալառուների, խորհրդատուների, տարածքը վարձակալության տվողների, բիզնես հյուրերի և գործընկերների համար, որոնց համար պահանջվում է հասանելիություն Microsoft-ի ցանցին և/կամ օբյեկտներին, կիրառվում են հետևյալ լրացուցիչ ստանդարտները:

9.1 ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ/ՄՈՒՏՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
Մատակարարները, կապալառուները, ենթակապալառուները, խորհրդատուները, տարածքը վարձակալության տվողները, բիզնես հյուրերը և գործընկերները պետք է անցկացնեն նախաորակավորման/մուտքի թույլտվության անհատական պատմության ուսումնասիրություններ իրենց աշխատակիցների համար, ովքեր (1) պետք է մուտք գործեն Microsoft-ի ցանց, այդ թվում՝ Էլփոստ, SharePoint կայքեր, կամ որևէ այլ գործիք, կայք, հարթակ, կամ (2) պետք է առանց ուղեկցության մուտք գործեն Microsoft-ի օբյեկտներ (սեփական կամ վարձակալված), ինչպես նաև բանալի-քարտերի կամ մուտքի այլ անվանաքարտերի տրամադրման համար: Այդպիսի ուսումնասիրությունների նպատակը հավաստիանալն է, որ նրանք, ովքեր ունեն հասանելիություն Microsoft-ի հաստատություններին, սարքավորումներին, ցանցերին կամ համակարգերին, իրենցից վտանգ չեն ներկայացնում ապահովության և անվտանգության տեսանկյունից: Նախքան արտաքին աշխատողներին հաստատությունում աշխատելու և/կամ որևէ մեկին հաստատություն մուտք գործելու իրավունք տալը՝ գործող օրենսդրությամբ թույլատրելի չափով, Մատակարարը պետք է գրանցվի Microsoft-ի Արտաքին աշխատողների գլոբալ

սքրինինգի ծրագրին (Global External Staff Screening Program) և անցկացնի Նախատրակավորման/մուտքի թույլտվության անհատական պատմության ուսումնասիրությունն այդ ծրագրով, որը կարգաբերվել է Microsoft-ի լիազորած սքրինինգային ծառայության պրովայդերի կողմից:

Որոշ աշխատողների հաստատությունում աշխատելու թույլտվության համար Մատակարարը պետք է անցկացնի լրացուցիչ պարբերական անհատական պատմության ուսումնասիրություններ: Այն չափով, որքանով դա թույլատրվում է գործող օրենքով՝ Microsoft-ը կորոշի անհատական պատմության ուսումնասիրության համար անհրաժեշտ նվազագույն տվյալները, որոնք պետք է ստուգվեն՝ ըստ յուրաքանչյուր երկրի: Անհատական պատմության ուսումնասիրությունները սովորաբար ներառում են հետևյալ տվյալները՝ ինքնության ստուգում, դատվածության ստուգում, հանցագործությունների ազգային տվյալների բազայում ստուգում, սեռական բնույթի հանցագործություններ կատարած անձանց գրանցամատյանում ստուգում և գլոբալ պատժամիջոցների ստուգում: Microsoft-ը կարող է պահանջել լրացուցիչ ուսումնասիրություններ, օրինակ՝ կրթության ստուգում, նախորդ աշխատանքի ստուգում, աշխատանքի հետ կապված լիցենզիաների ստուգում, սպառողական վարկերի հաշվետվությունների ստուգում, թմրանյութի օգտագործման ստուգում և/կամ այլ համապատասխան տվյալների հավաքում, եթե դա անհրաժեշտ է տվյալ աշխատանքի համար:

Յուրաքանչյուր անհատական պատմության ուսումնասիրության հաշվետվությունից հետո Մատակարարը պետք է գնահատի, թե արդյոք Մատակարարի աշխատողները կարող են հասանելիություն ունենալ Microsoft-ի հաստատություններին և/կամ ցանցին, որն անհրաժեշտ է նրանց՝ Microsoft-ի հետ կապված աշխատանքը կատարելու համար: Մասնավորապես, Մատակարարը պետք է ուշադրություն դարձնի անհատական պատմության ուսումնասիրության հաշվետվության մեջ պարունակվող այնպիսի տեղեկությունների վրա, ինչպիսիք են քրեական դատվածությունները կամ այնպիսի տվյալներ, որոնք կարող են անձին անհամապատասխան դարձնել՝ Microsoft-ի հետ կապված աշխատանք կատարելու և/կամ Microsoft-ի հաստատությունները մուտք գործելու: Դատվածությունների օրինակները, որոնց վրա պետք է հատուկ ուշադրություն դարձնի և ստուգի Մատակարարը, ներառում են, սակայն չեն սահմանափակվում խարդախություններ (օրինակ՝ սեփականության կամ անձնական տվյալների գողություն, յուրացում, խաբեություն, կեղծարարություն, և այլն) և բռնություն (օրինակ՝ սպանություն, բռնաբարություն, սեռական շահագործում, առևանգում, հարձակում, կողոպուտ, հետապնդում, ոտնձգություններ, և այլն): Մատակարարներից կարող է պահանջվել հաստատում, որ նրանք իրենց աշխատողների համար անցկացրել են նախատրակավորման/մուտքի թույլտվության ստուգում՝ սույն քաղաքականության համաձայն: Մատակարարը պետք է ուշադրություն դարձնի քրեական դատվածությունների, լուրջ իրավախախտումների, պարտքի առկայության կամ անհատական պատմության ուսումնասիրության ժամանակ բացահայտված այլ զանցանքների վրա, որոնք կարող են անհատին դարձնել անհամապատասխան՝ Microsoft-ում աշխատելու/մուտք գործելու համար:

Microsoft-ն իրեն իրավունք է վերապահում Մատակարարի հետ ստուգել և քննարկել սքրինինգի ժամանակ ձեռքբերված ցանկացած անձի տվյալները, ով պետք է աշխատի կամ մուտքի թույլտվություն ունենա, ինչպես նաև այն դեպքերի համար, որտեղ կպահանջվի Մատակարարի աշխատակազմի հասանելիությունը Microsoft-ի հաճախորդների, գործընկերների, աշխատակիցների կամ այլ երրորդ կողմերի վարկային քարտերի կամ գաղտնի անձնական տվյալներին: Ցանկացած այդպիսի քննարկում պետք է անցկացվի գործող օրենքին համապատասխան: Այդ դիտարկման հիման վրա Microsoft-ը կարող է ըստ իր հայեցողության արգելել ցանկացած անձի հաստատությունում աշխատել/մուտք գործել:

Եթե Մատակարարը օգտվում է ենթակապալառուի ծառայություններից, որոնց համար (1) պահանջվում է հասանելիություն Microsoft-ի ցանց, ներառյալ` Էլփոստ, SharePoint կայքեր, որևէ այլ գործիք, կայք, հարթակ, կամ (2) պահանջվում է առանց ուղեկցության մուտք Microsoft-ի օբյեկտներ (սեփական կամ վարձակալված), ինչպես նաև բանալի-քարտերի կամ մուտքի այլ անվանաքարտերի տրամադրում, Մատակարարը պետք է ապահովի, որ ենթակապալառուների հետ իր պայմանագրերում ներառված լինեն սույն քաղաքականության մեջ նշված պահանջները: Բացի այդ, եթե ենթակապալառուի աշխատողների համար պահանջվում է հասանելիություն Microsoft-ի հաճախորդների, գործընկերների, աշխատակիցների կամ երրորդ կողմերի վարկային քարտերի, ֆինանսական կամ գաղտնի անձնական տվյալներին, Մատակարարը պետք է ձեռնարկի նաև ողջամիտ քայլեր` գործող օրենքին համապատասխան, ապահովելու համար, որպեսզի ենթակապալառուներն անցկացնեն պահանջվող անհատական պատմության ուսումնասիրությունը (սքրինինգը) իրենց աշխատողների համար, ինչպես սահմանված է սույն քաղաքականության մեջ:

Եթե Մատակարարին հայտնի է դառնում Microsoft-ի սեփական կամ վարձակալված օբյեկտներին կամ Microsoft-ի ցանցերին ներկայումս հասանելիություն ունեցող իր աշխատակիցների կամ ենթակապալառուի (ենթակապալառուների) քրեական գործունեության մասին, Մատակարարը պարտավոր է այդ տեղեկությունն իմանալուց հետո 24 ժամվա ընթացքում փոխանցել այն Microsoft Global Security-ին` որոշելու համար` արդյոք տվյալ անձը կարող է շարունակել հասանելիություն ունենալ, թե ոչ: Եթե չի կարող, ապա Microsoft Global Security-ն կտեղեկացնի Microsoft-ի Հովանավորին և Մատակարարին, որպեսզի անձին աշխատանքից հեռացնեն Microsoft-ից և շտապ կարգով դադարեցնեն նրա հասանելիությունը: Մատակարարի աշխատողներին կամ ենթակապալառուին (ենթակապալառուներին) Microsoft-ի սեփական կամ վարձակալված հաստատություններից հեռացնելիս Մատակարարները պետք է հետևեն գործող բոլոր օրենքներին: Եթե այդ քրեական գործունեությունը կարող է դառնալ Microsoft-ի գույքին կամ աշխատակիցներին ֆիզիկական վնաս հասցնելու պատճառ, Մատակարարն անմիջապես պետք է տեղեկացնի այդ մասին Microsoft-ի հետ իր բիզնես-գործակցության կոնտակտային անձին և Microsoft Global Security-ին, սակայն ոչ ուշ, քան այդ մասին տեղեկանալուց հետո 24 ժամվա ընթացքում:

Ամեն դեպքում, Մատակարարները պետք է հետևեն Վարկային ազնիվ հաշվետվությունների օրենքին և ցանկացած այլ կիրառելի դաշնային, նահանգային,

տեղական օրենքներին՝ ներառյալ անձնական տվյալների պաշտպանության օրենքները: Մատակարարները պատասխանատու են համապատասխան ծանուցումներ տալու և, անհրաժեշտության դեպքում, ստանալու օրինական համաձայնություններ կամ ստեղծելու այլ օրինական հիմքեր (1) Նախաորակավորման/մուտքի թույլտվության անհատական պատմության ուսումնասիրություններ անցկացնելու և, (2) անհրաժեշտության դեպքում, Microsoft-ին տրամադրելու անհրաժեշտ համաձայնությունը, որը պետք է, որպեսզի Microsoft-ը օրինական եղանակով այդ ինֆորմացիան ստանա և օգտագործի: Microsoft-ի կողմից պահանջի դեպքում Մատակարարները պետք է տրամադրեն իրենց աշխատակիցներին անձնական տվյալների պաշտպանության ծանուցումներ կամ համաձայնության փաստաթղթեր՝ Microsoft-ի կողմից հաստատված ձևաչափով՝ նախքան Նախաորակավորման/մուտքի թույլտվության անհատական պատմության ուսումնասիրություններ անցկացնելը:

Ի լրումն համապատասխան պայմանագրում նշված բոլոր փոխհատուցման պարտավորությունների, եթե այդպիսիք կան, որոնց համաձայն Մատակարարը վարձվել է Microsoft-ի կողմից, Մատակարարը համաձայնում է վնասից գերծ պահել Microsoft-ին և փոխհատուցել նրան, նրա մասնաճյուղերին և դուստր ընկերություններին և դրանց համապատասխան պաշտոնատար անձանց, տնօրեններին, աշխատակիցներին, գործակալներին և ապահովագրողներին («Microsoft-ի կողմեր») որևէ և բոլոր վնասները, տույժերը, տուգանքները, կորուստները, պարտավորությունները, դատավճիռները, հաշվարկները, պարգևավճարները և ծախսերը (ներառյալ փաստաբանների խելամիտ վճարներն ու ծախսերը), որոնք ծագում են բողոքների, հայտարարությունների, պահանջների, գործողության հետևանքների, հայցերի, քննությունների, հետաքննությունների և կամ դրանց հետ կապված՝ ըստ օրենքի կամ դատական կարգով հարկադիր այլ գործողությունների («Բողոքներ»), որոնք առնչվում են (1) Մատակարարի կողմից սույն նախաորակավորման քաղաքականության որևէ խախտման (2) Մատակարարի կողմից սույն նախաորակավորման քաղաքականության մեջ սահմանված գործող օրենքների կամ որոշումների խախտման (3) Մատակարարի անփութության, սխալ վարքի, անխոհեմության, սխալների կամ բացթողումների, և/կամ (4) Մատակարարի աշխատանքի ընդունման որոշումների հետ: Մատակարարը նաև պետք է վնասից գերծ պահի և փոխհատուցի Microsoft-ի կողմերին ցանկացած Բողոքներից, որոնք ստացվում են Մատակարարի աշխատակցի կամ կապալառուի կողմից Microsoft-ի մեկ կամ մի քանի Կողմերի դեմ կապված սույն Նախաորակավորման/մուտքի թույլտվության քաղաքականության մեջ նշված անհատական պատմության ուսումնասիրության հետ: Որպեսզի ավելի պարզ լինի, Մատակարարի վարքագծի կանոնների Նախաորակավորման/մուտքի թույլտվության քաղաքականության բաժնում վնասի փոխհատուցման լրացուցիչ պարտավորությունները կիրառվում են բացառապես Microsoft-ի օբյեկտներին, սարքավորումներին, ցանցերին կամ համակարգերին Մատակարարի աշխատողների հասանելիության առնչությամբ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք [Անհատական պատմության ուսումնասիրության հաճախակի տրվող հարցերը](#): Մատակարարները կարող են սույն ծրագրի հետ կապված հարցերով և խնդիրներով դիմել՝ supscrn@microsoft.com:

9.2 ՕԳՏՎԵԼ MICROSOFT-Ի ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ և ՑԱՆՑԻՑ

- a. Մատակարարները չպետք է օգտվեն Microsoft-ի կողմից տրամադրված որևէ հաստատությունից (օրինակ՝ շինություններ և տարածքային ծառայություններ), բացառությամբ այն դեպքերի, երբ Microsoft-ի կողմից նախօրոք գրավոր համաձայնությամբ Microsoft-ին ծառայություններ են մատուցվում:
- b. Երբ Մատակարարի աշխատակիցներին Microsoft-ի հաստատություններ, Microsoft-ի Էլփոստի համակարգի հաշիվ և/կամ Microsoft-ի որևէ ցանց կամ համակարգ մուտք գործելու համար անհրաժեշտ են լինում բանալի-քարտեր, Մատակարարը և իր աշխատակիցները պետք է ստորագրեն Microsoft-ի կողմից պահանջված բոլոր գործող պայմանագրերը:
- c. Մատակարարները և իրենց աշխատակիցները չպետք է օգտագործեն Microsoft-ի տարածքներում իրենց գտնվելու վայրերը կամ ցանցի հասանելիությունը՝ տեղեկություններ կամ նյութեր կամ ֆիզիկական հասանելիություն ստանալու համար, բացառությամբ Microsoft-ի կողմից գրավոր կերպով լիազորված դեպքերի: Microsoft-ը պատասխանատվություն չի կրում Microsoft-ի տարածքում գտնվող ցանկացած Մատակարարին, նրա աշխատակցին կամ լիազորված ենթակապալառուին պատկանող որևէ անձնական գույքի կամ տրանսպորտային միջոցի կորստի, վնասի, գողության կամ անհայտացման համար:
- d. Եթե Մատակարարին հայտնի է դառնում, որ «զգալի» վնաս է հասցվել Microsoft-ի տարածքում գտնվող որևէ մեկին կամ գույքին, Մատակարարը պետք է անմիջապես այս մասին ծանուցի Microsoft-ին և համապատասխան մանրամասներ տրամադրի, որպեսզի Microsoft-ը հնարավորություն ունենա ուսումնասիրելու դեպքը: «Զգալի» այս դեպքում նշանակում է անձին հասցված այնպիսի վնասը, որի արդյունքում հարկավոր է լինում հիվանդանոցային բուժում կամ գրանցվում է մահ, կամ գույքի այնպիսի վնասը կամ կորուստը, որի վերանորոգման կամ փոխարինման արժեքը գերազանցում է 10 000 ԱՄՆ դոլարը:

10. ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ և ԿԱՍԿԱԾԵԼԻ ՊԱՀՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Ձեկուցելու համար կասկածելի պահվածքի կամ Մատակարարի Վարքագծի կանոնների հնարավոր խախտման մասին, Մատակարարներին խորհուրդ է տրվում դիմել Microsoft-ի առաջնային կոնտակտային անձին՝ խնդիրը լուծելու համար: Եթե դա հնարավոր կամ նպատակահարմար չէ, ապա կապ հաստատեք Microsoft-ի հետ հետևյալ եղանակներից որևէ մեկով՝ որ նկարագրված է այստեղ՝ <http://www.microsoftintegrity.com/>

Microsoft-ը հնարավորին չափով կպահպանի գաղտնիությունը և չի հանդուրժի պատժիչ կամ հատուցման միջոցների կիրառում որևէ անձի նկատմամբ, ով ազնիվ նպատակներով խորհուրդ է հարցրել կամ հայտնել է կասկածելի պահվածքի կամ Մատակարարի վարքագծի սույն կանոնների հնարավոր խախտման մասին: